Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 04-06-2021 թ. որոշմամբ
««ՀԱՐՄՈՆԻԱ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՐՄՈՆԻԱ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՍԵՎԱՍՏՈՊՈԼՅԱՆ 45
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00502
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2005-06-13
1.5 ՀՎՀՀ-ն		00090751
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)95556810
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.hf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@hf.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մուրադ Մուրադյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	31	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի մշակում և տեղադրում	29821867
	Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ	205139148
	Էլեկտրոնային հավատարմագրման գործընթացի ավտոմատացման համակարգի մշակում	8145100

	ՀՀ ուսումնական հաստատություններում (դպրոց ՊՈԱԿ-ներում) կապի հանգույցի, կապի սարքավորումների, տեղային համակարգչային ցանցերի և թվով 21000 համակարգիչների ծրագրային սպասարկման բնականոն աշխատանքային ռեժիմն ապահովելու նպատակով համապատասխան համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություններ	65800000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Տարածքային ցանցերի սպասարկում	200000000
	Տեսախցիկների տեղադրման, ցանցին միացման, կարգավորման և կարգաբերման աշխատանքներ	93166380
	ISO 37001 դասընթաց 1 անձի համար	539000
	Համակարգչային սպասարկման ծառայություններ	500000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի մշակում և տեղադրում	28935127	
Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ	204678494	
Էլեկտրոնային հավատարմագրման գործընթացի ավտոմատացման համակարգի մշակում	7836357	

ՀՀ ուսումնական հաստատություններում (դպրոց ՊՈԱԿ-ներում) կապի հանգույցի, կապի սարքավորումների, տեղային համակարգչային ցանցերի և թվով 21000 համակարգիչների ծրագրային սպասարկման բնականոն աշխատանքային ռեժիմն ապահովելու նպատակով համապատասխան համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություններ	56606175
Տարածքային ցանցերի սպասարկում	171723086
Տեսախցիկների տեղադրման, ցանցին միացման, կարգավորման և կարգաբերման աշխատանքներ	82924968
ISO 37001 դասընթաց 1 անձի համար	441590
Համակարգչային սպասարկման ծառայություններ	420648
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	553566445
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	553566445

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 6 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

AVC
Consulting&Audit

ՀՀ , ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ -02.08.2006թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հարմոնիա »տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հարմոնիա» տեղեկատվական տեխմոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

09 հունիս 2021թ.

Գլխավոր տնօրեն՝ *Մկրտիչ Պետրոսյան*

Աուդիտոր՝ *Արթուր Մխիթարյան*

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	9 508	9 925
Հետաձգված հարկային ակտիվներ	18	296	311
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**9 804**	**10 236**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	1 023	664
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	114 220	63 057
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	7	297 737	86 369
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	126 302	413 003
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**539 282**	**563 093**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**549 086**	**573 329**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կուտակված շահույթ		477 836	390 050
Ընդամենը սեփական կապիտալ		**477 836**	**390 050**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	18	-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	71 250	183 279
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**71 250**	**183 279**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**549 086**	**573 329**

Տնօրեն՝ Մ.Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 04-ին:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին: (էջ 8-26)

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31.12.2020թ ավարտված տարի	31.12.2019թ ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	11	604 004	610 819
Վաճառքի ինքնարժեք	11	(466 408)	(510 808)
Համախառն շահույթ (վնաս)		**137 596**	**100 011**
Վարչական ծախսեր	12	(73 154)	(72 609)
Այլ եկամուտներ	13	5	19
Այլ ծախսեր	13	(177)	(145)
Ներդրումային եկամուտ	14	11 082	3 881
Ֆինանսական ծախսումներ	15	(2 777)	(864)
Այլ օգուտներ և կորուստներ	16	28 225	(3 228)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը		**100 800**	**27 065**
Շահութահարկի գծով ծախս	17	(13 014)	(6 170)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		**87 786**	**20 895**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**87 786**	**20 895**

Տնօրեն՝ Մ.Մուրադյան

Հաշվապահ՝ Ա.Մկրտչյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-26)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	Կուտակված շահույթ	Ընդամենը
2019թ հունվարի 1-ի դրությամբ	**369 155**	**369 155**
Տարվա արդյունք	20 895	20 895
2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**390 050**	**390 050**
2020թ հունվարի 1-ի դրությամբ	**390 050**	**390 050**
Տարվա արդյունք	87 786	87 786
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**477 836**	**477 836**

Տնօրեն՝ Մ.Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-26)

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	2020թ	2019թ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**413 003**	**310 995**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	681 606	770 504
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(77 907)	(117 779)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(631 846)	(387 356)
Վճարված շահութահարկ	(4 994)	(7 268)
Վճարված այլ հարկեր և պարտադիր վճարներ	(73 374)	(93 944)
Ստացված տոկոսներ	9 550	1 742
Այլ վճարումներ	(6 941)	(291)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(103 906)**	**165 608**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռք բերումից ելքեր	(3 407)	(10 708)
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր		8 607
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից ելքեր	(178 253)	(59 220)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(181 660)**	**(61 321)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(285 566)**	**104 287**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1 135)	(2 279)
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**126 302**	**413 003**

Digitally signed by MURADYAN MURAD 3112680146
Date: 2021.09.17 12:53:45

Տնօրեն՝ Մ. Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-26)

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 17.09.2021 12:52